



HY

Մատնահետքեր և Եվրոդալ

Տեղեկատվություն երրորդ երկրի քաղաքացիների
կամ անդամ երկրում ապօրինի բնակվող
քաղաքացիություն չունեցող անձանց վերաբերյալ՝
համաձայն համար **603/2013** կանոնակարգի (ԵՄ)
29 (3) հոդվածի

Եթե դուք ապօրինաբար ապրում եք դուրիսյան երկրում¹⁾, ապա իշխանությունները կարող են ձեր մատնահետքերը վերցնել և փոխանցել «Եվրոդակ» մատնահետքերի տվյալների բազա Սրա միակ նպատակն է պարզել, արդյոք դուք արդեն դիմել եք ապաստան ստանալու համար: Ձեր մատնահետքին վերաբերող տվյալները չեն պահվի «Եվրոդակ»-ի տվյալների բազայում, բայց եթե դուք արդեն դիմել եք ապաստան ստանալու համար մեկ այլ երկրում, ապա ձեզ կարող են վերադարձնել այդ երկրին:

Եթե Ձեր մատնահետքերը, ի թիվս այլ բաների, վատ որակի են, քանի որ դուք դիտավորյալ կերպով վնասել եք ձեր մատերը, ապա հետագայում ձեր մատնահետքերը կրկին կվերցվեն:

«Եվրոդակ»-ը գործում է Եվրոպական միության գործակալության միջոցով, որը կոչվում է eu-LISA: Ձեր տվյալները կարող են օգտագործվել միայն օրենքով նախատեսված նպատակների համար: «Եվրոդակ»-ի կենտրոնական համակարգն է միայն ստանում ձեր տվյալները: Հետագայում, եթե դուք ապաստան ստանալու համար փաստաթղթեր եք ներկայացնում մեկ այլ դուրիսյան երկրում, ապա ձեր մատնահետքերը կվերցվեն, որպեսզի փոխանցեն «Եվրոդակ»-ին: «Եվրոդակ»-ում պահվող տվյալները չեն փոխանակվելու դուրիսյան երկրներ չհանդիսացող այլ պետությունների կամ կազմակերպությունների հետ:

- 1) Վերաբերում է ողջ Եվրոպական միությանը (Ավստրիա, Բելգիա, Բուլղարիա, Խորվաթիա, Կիպրոս, Չեխիայի հանրապետություն, Դանիա, Էստոնիա, Ֆինլանդիա, Ֆրանսիա, Գերմանիա, Հունաստան, Հունգարիա, Իռլանդիա, Իտալիա, Լատվիա, Լիտվա, Լյուքսեմբուրգ, Մալթա, Նիդերլանդներ, Լեհաստան, Պորտուգալիա, Ռումինիա, Սլովակիա, Սլովենիա, Իսպանիա, Շվեդիա, Մեծ Բրիտանիայի միացյալ թագավորություն) և Դուրիսի կանոնակարգի չորս գործընկեր երկրներին (Նորվեգիա, Իսլանդիա, Շվեյցարիա և Լիխտենշտեյն):

© Եվրամիություն 2014

Ռեպրոդուկցիան (վերարտադրությունը) թույլատրելի է: Անձնական լուսանկարների օգտագործման կամ կրկնօրինակման թույլտվությունը պետք է ձեռք բերել անմիջապես հեղինակային իրավունքի սեփականատերերից:

Կոնտակտային տվյալներ

Փախստականների հարցերով զբաղվող իշխանությունների հասցեն և մանրամասները Bundesamt für Migration und Flüchtlinge (BAMF) Frankenstraße 210 90461 Nürnberg Հեռ.՝ +49 (0)911 943 0 Ֆաքս՝ +49 (0)911 943 10000 Էլ. փոստ՝ service@bamf.bund.de

«Եվրոդակ»-ի փորձագետի հասցեն և մանրամասները Bundeskriminalamt (BKA) 65173 Wiesbaden Հեռ.՝ +49 (0)611 55 0 Ֆաքս՝ +49 (0)611 55 12141 www.bka.de

Եթե մեր իշխանությունները կասկածում են, որ կարող է դուք ապաստան ստանալու համար դիմել եք մեկ այլ երկրի, և որ մեկ այլ պետություն կարող է պատասխանատու լինել այդ հայցադիմումի քննության համար, ապա ձեզ կտրամադրեն ավելի մանրամասն տեղեկատվություն հետագա ընթացակարգի վերաբերյալ, և ինչպես է դա ազդում ձեր և ձեր իրավունքների վրա:



Տեղեկատվություն ապաստան փնտրողների համար, ովքեր անցնում են Դուրիսի ընթացակարգի միջով համաձայն համար 604/2013 կանոնակարգի (ԵՄ) 4-րդ հոդվածի